01/10.1/11982-10
2010-10-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Հերմինե Նաղդալյանի և Արայիկ Հովհաննիսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի լրամշակված տարբերակի վերաբերյալ:

1. «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1) անհրաժեշտ է 2-րդ հոդվածը լրամշակել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բժշկական հետազոտության նպատակը պետք է լինի հղիության փաստի առկայության հավաստումը.

2) 3-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունն անընդունելի է, քանի որ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանափակումը գործում է ամուսնու

կողմից ամուսնալուծության համար դատարան հայց կամ ՔԿԱԳ-ի մարմին ամուսնալուծության մասին դիմում ներկայացնելիս։ Այն ուղղված է կնոջը հղիության ընթացքում ամուսնալուծության հետ կապված անհանգստություններից և ապրումներից զերծ պահելուն, այսինքն՝ այն նաև ուղղված է մոր և երեխայի առողջության պահպանմանը.

3) 4-րդ և 5-րդ հոդվածներում առաջարկվող փոփոխություններն անընդունելի են հետևյալ հիմնավորումներով՝

ա. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 6-րդ գլուխը նվիրված է ամուսինների անձնական ոչ գույքային իրավունքներին և պարտականություններին, որոնք սահմանում են ընտանիքում նրանց փոխհարաբերությունների հիմքերը։ Այդ փոխհարաբերությունները ձևավորվում են այն հաշվով, որ որոշակի իրավունքների իրականացման ժամանակ ամուսիններից յուրաքանչյուրն ամբողջովին անկախ է և իրավունք ունի ինքնուրույն, առանց որևէ կողմնակի ազդեցության ընտրելու իր համար, օրինակ, զբաղմունք, մասնագիտություն, գործունեության ոլորտ՝ առաջնորդվելով բացառապես սեփական ցանկություններով, հնարավորություններով, կոչումով և այլն։ Միևնույն ժամանակ համատեղ կյանքի բազմաթիվ հարցեր պետք է որոշվեն ամուսինների կողմից միասին, հավասարության սկզբունքով, ինչն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 35-րդ հոդվածով՝ առաջին հերթին հաշվի առնելով ընտանիքի շահերը։

Ամուսինների՝ թվարկված անձնական ոչ գույքային իրավունքները վերաբերում են այն իրավունքներին, որոնք ապահովում են ամուսինների սոցիալական գոյությունը։

Ամուսիններից յուրաքանչյուրի՝ զբաղմունքի, մասնագիտության և գործունեության ոլորտի ընտրության ազատությունն անմիջականորեն կապված է անալոգիական սահմանադրական սկզբունքի (յուրաքանչյուր քաղաքացի ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք) և մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների հավասարության սկզբունքի հետ։ Նկատի ունենալով դա՝ ամուսիններից յուրաքանչյուրը կարող է կամ վարձու աշխատանք կատարել, կամ լինել ձեռնարկող, նախաձեռնող (անհատ ձեռներեց), կամ ընդհանրապես որևէ աշխատանքային գործունեությամբ չզբաղվել։ Քանի որ սահմանադրական սկզբունքի համաձայն յուրաքանչյուր քաղաքացի ունի ազատ տեղաշարժման, բնակության և գտնվելու վայրի ընտրության իրավունք, ամուսիններից յուրաքանչյուրն ունի համապատասխան՝ ազատ տեղաշարժման, բնակության և գտնվելու վայրի ընտրության իրավունքներ։

Ինչ վերաբերում է ամուսինների գույքային իրավունքներին, ապա Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հստակ սահմանում է, որ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է:

Ամուսիններին նաև իրավունք է վերապահվում կնքելու ամուսնական պայմանագիր՝ մինչև ամուսնություն կնքելը և ամուսնության ցանկացած ժամանակահատվածում՝ փոփոխելով ընդհանուր սեփականության շրջանակը, սահմանել համատեղ, բաժնային և յուրաքանչյուրի սեփականություն՝ ամուսինների ամբողջ կամ յուրաքանչյուրի գույքի կամ դրա առանձին տեսակների նկատմամբ,

բ. 5-րդ հոդվածով նախատեսված լրացումը լուրջ հիմնավորման կարիք ունի, քանի որ պարզ չէ, թե՝

- ինչ չափանիշներով է որոշվելու, թե չաշխատող ամուսինն զբաղվե՞լ է, արդյոք, տնային տնտեսությամբ, նպաստե՞լ է ամուսնու կարիերայի աճին և այլն,

- ինչ «արդարացի փոխհատուցման» մասին է խոսքը, ինչ կարգով և ում կողմից է այն տրամադրվելու, պետությա՞ն, թե՞՝ ամուսնու: Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածին,

գ. անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 201-րդ և Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 26-րդ հոդվածների, ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով:

2. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածը «8» թվից առաջ անհրաժեշտ է լրացնել «1-ին մասի» բառերով:

3. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1) 1-ին հոդվածով նախատեսվող լրացումն ըստ էության անհավասար պայմաններ է ստեղծում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար, քանի որ կնոջ համար ստեղծում է արտոնյալ պայմաններ: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը հավասար պայմաններ է սահմանում բոլոր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց՝ և տղամարդկանց, և կանանց համար: Նախագծում ներկայացված դրույթը չի բխում Հայաստանի Հանրապե-

տության Սահմանադրության 33.1-ին հոդվածի պահանջներից և հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14.1-ին հոդվածին:

Բացի դրանից՝ օրենքի նախագծի նույն հոդվածում պարզ չէ, թե որոնք են «համապատասխան միջոցները», և պետությունն ինչպես է «ձեռնարկելու» դրանց իրականացումը.

2) 2-րդ հոդվածը լուրջ հիմնավորման կարիք ունի, քանի որ պարզ չէ, թե ինչպես է որոշվելու, թե ամուսիններից որն է նպաստել մյուսի կարիերայի աճին: Գտնում ենք, որ նման ձևակերպումը պրակտիկայում կարող է լուրջ խնդիրներ առաջացնել.

3) 3-րդ հոդվածն ավելորդ է, քանի որ նշված օրենսգրքի 1058-րդ հոդվածը սահմանում է վնասի հատուցման համար պատասխանատվության ընդհանուր հիմքերը, ուստի, բռնության գործոնն առանձնացնելը սխալ է և խախտում է նշված հոդվածի հիմնական սկզբունքը:

4. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ դիտողություններ չունենք:

5. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ դիտողություններ չունենք:

6. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող հոդվածի դիսպոզիցիան իրավակիրառ պրակտիկայում կարող է լուրջ խնդիրներ առաջացնել: Մասնավորապես, պարզ չէ, թե ինչպես պետք է ապացուցվի, որ ամուսինն իր գործողություններով դրդել է կնոջն ապօրինի աբորտ կատարել:

Նույն հոդվածում պարզաբանման կարիք ունի «ինքնաբորտ» հասկացությունը:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրամշակված տարբերակ
Պ-934-21.06.2010,02.09.2010-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի ընտանեկան օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1.Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու եւ կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը եւ նրանց տասնութ տարեկան դառնալը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:»:

Հոդված 2. Օրենսգրքի 12-րդ հոդվածը լրացնել նոր 2.1.-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«2.1. Բժշկական հետազոտության արդյունքների հիման վրա ամուսնական տարիք կարող է սահմանվել կանանց համար՝ տասնյոթ տարեկան տարիքի հասնելը:»:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հոդված 4. Օրենսգրքի 24-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ. «4. Ամուսիններն ունեն հավասար իրավունքներ եւ հավասար հնարավորություններ:»:

Հոդված 5. Օրենսգրքի 7-րդ գլուխը լրացնել նոր 31.1-րդ հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 31.1. ԱՄՈՒՍՆԱՑԱԾ, ՉԱՇԽԱՏՈՂ ԱՄՈՒՍՆՈՒ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Չաշխատող ամուսինը, որը զբաղվել է տնային տնտեսությամբ, երեխաների խնամքով, նպաստել է ամուսնու կարիերայի աճին, ամուսնալուծվելիս կարող է ստանալ արդարացի փոխհատուցում՝ համատեղ կյանքում իր կատարած եւ չվճարված աշխատանքի դիմաց:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Լրամշակված տարբերակ
Պ-934[1]-21.06.2010,02.09.2010-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ին քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 2-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«2. Պետությունը ձեռնարկում է համապատասխան միջոցներ կանանց ձեռնարկատիրական գործունեությունը խթանելու համար:»:

Հոդված 2. Օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասը «(հիմնական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում եւ այլն),» բառերից հետո լրացնել «եւ (կամ) նպաստել են ամուսիններից մեկի կարիերայի աճին,» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ բովանդակությամբ.

« Բռնության հետեւանքով պատճառված վնասը ենթակա է արդարացի փոխհատուցման:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Լրամշակված տարբերակ
Պ-934[2]-21.06.2010,02.09.2010-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 5-ի ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ներկայացրած ընտրական ցուցակում առնվազն 15 տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում՝ առաջին տասնյակում, իսկ դրանից հետո՝ յուրաքանչյուր վեցյակում պետք է լինի առնվազն մեկ կին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Լրամշակված տարբերակ
Պ-934³-21.06.2010,02.09.2010-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին

Հոդված 1 . Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ին աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 172-րդ հոդվածը լրացնել 4-րդ եւ 5-րդ մասերով հետեւյալ բովանդակությամբ.

«4. Հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ընթացքում պահպանվում է աշխատողի աշխատատեղը (պաշտոնը), բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքի:

«5.Սույն հոդվածի 4-րդ մասի խախտումը առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:»:

Հոդված 2. Օրենսգրքի 173-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«3.Սույն հոդվածի 2-րդ մասի խախտումը առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Լրամշակված տարբերակ
Պ-934⁴-21.06.2010,02.09.2010-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը լրացնել նոր 122.1. հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 122.1. ԿՆՈՋՆ ԱՊՕՐԻՆԻ ԱԲՈՐՏ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱԿԵԼԸ

Կնոջն ապօրինի աբորտ կատարելուն հակելը՝ հորդորելու, խաբեության կամ այլ միջոցով նրա մոտ աբորտ կատարելու վճռականություն հարուցելը, եթե կինն ինքնաբորտ է կատարել կամ դրա համար համապատասխան մասնագետի է դիմել կամ այդպիսի փորձ է կատարել՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-934[5]-02.09.2010-ՄԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ին քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 8-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության մասին

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է վերը նշված օրենսգրքերի ներկայացված հոդվածները Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ, 16-րդ, 23-րդ, 25-րդ, Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 3-րդ, 23-րդ, Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 10-րդ, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայի 2-րդ, 6-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ, Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 12-րդ, Կանանց եւ տղամարդկանց հավասարության մասին հռչակագրի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ հոդվածներին եւ

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 1-ին մասի 27-րդ կետին, 2-րդ մասի 20-րդ հոդվածին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցնելը չի ոտնահարում դեռ չծնված երեխայի իրավունքը, այլ վերացնում է տղամարդու նկատմամբ գենդերային խտրականությունը եւ վերաբերում է տղամարդու եւ կնոջ ամուսնալուծությանը եւ ոչ թե երեխայի խնամքին, հայրությանը, ալիմենտին, քաղաքացիությանը եւ այլն: Օրենսգրքի 24-րդ հոդվածը 4-րդ մասով լրացնելը բխում է ՀՀ Սահմանադրության 35-րդ, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 7-րդ եւ «Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին» կոնվենցիայի 15-րդ հոդվածների պահանջներից: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ իրավահավասարություն ասելով, միջազգային փատաթղթերը, ի նկատի ունեն նաեւ հնարավորությունների հավասարությունը: Մինչդեռ ՀՀ սահմանադրության եւ օրենսդրության մեջ չկա հավասար հնարավորությունների մասին դրույթ: Ուստի, առաջարկվող փոփոխությունը՝ գենդերային հավասարակշռության է բերում ամուսինների իրավունքներն ու հնարավորությունները: Միջազգային փաստաթղթերը եւ միջազգային դատական պրակտիկան հատուկ ուշադրության են արժանացնում միակողմանի կարերիայով ընտանիքներին: Օրենսգրքի տարբեր հոդվածներ հռչակում են ամուսինների իրավահավասարությունը, սակայն իրականում համատեղ կյանքում, նրանք հնարավորություն չեն ունենում հավասար չափով իրականացնելու իրենց գույքային իրավունքները: Այդ նպատակով օրենսգիրքը 31.1. հոդվածով լրացնելը արդարացի փոխհատուցմամբ կպաշտպանի ամուսնալուծված եւ երբեւէ չաշխատած կնոջ գույքային իրավունքները՝ ստացված արտոնությունների, իրավունքների, առավելությունների փոխադարձ տրամադրմամբ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում առաջարկվող փոփոխությունը կապված է Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչելու հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առաջարկվող լրացումները գենդերային ճիշտ քաղաքականություն է կանանց տնտեսական իրավունքների իրականացմանը աջակցելու եւ ամուսինների գույքային իրավունքները պաշտպանելու, ինչպես նաեւ համահունչ է Հայաստանի Հանրապետության պարտավորություններին կանանց նկատմամբ կիրառվող բռնության դեմ պայքարելու համար՝ սահմանելով նաեւ քաղաքացիական պատասխանատվություն: Միաժամանակ, նկատի ունենալով, որ յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք, իսկ ձեռնարկատիրական գործունեությունը որոշակի սահմանափակումներ է նախատեսում լիցենզավորման ինստիտուտի միջոցով, որը գործընթաց է՝ կապված պետական մարմինների կողմից ձեռնարկատիրական գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու լիցենզիաների (թույլտվություն) տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձեւակերպման, գործողության կասեցման եւ դադարեցման հետ, ինչպես նաեւ ենթադրում է լիցենզայի պահանջների եւ պայմանների նկատմամբ համապատասխան հսկողության իրականացում, ոստի պետությունը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ կանանց ձեռնարկատիրական գործունեությունը խթանելու համար: Բացի այդ, միջազգային փաստաթղթերը խրախուսում եւ պաշտպանում են կանանց սոցիալ-տնտեսական իրավունքները (տես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ, Քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 3-րդ, 26-րդ, Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայի 11-րդ, 13-րդ, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 20-րդ հոդվածները եւ Պեկինյան գործողությունների ծրագրի՝ «Կանայք եւ տնտեսությունը» հիմնախնդրային ոլորտը):

Կանանց ձեռնարկատիրական գործունեությանը հատուկ ուշադրություն դարձնելու մասին է խոսում կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիրը, համաձայն որի կանայք արտոնյալ պայմաններով վարկավորվում են փոքր եւ միջին բիզնեսը զարգացնելու համար, իսկ Փոքր եւ միջին բիզնեսի զարգացման աջակցության պետական ծրագրում խոսվում է կանանց ձեռնարկատիրական գործունեությանը հատուկ ուշադրություն դարձնելու մասին:

ՀՀ ընտրական օրենսգրքում առաջարկվող փոփոխությունը, հստակեցումից բացի, պայմանավորված է վերը նշված միջազգային փաստաթղթերով, որոնք կանանց քաղաքական մասնակցությունն ակտիվացնելու համար նախատեսում են քվոտաներ, որը անհրաժեշտ ժամանակավոր միջոցառում է եւ ոչ թե խտրականություն: Մասնավորապես՝ Պեկինյան գործողությունների ծրագրի հանձնարարականի համաձայն մասնակից պետությունները պարտավորվել են տղամարդկանց եւ կանանաց համար ապահովել հավասար իրավունքներ եւ հավասար հնարավորություններ 50-50 հարաբերակցությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 172-րդ եւ 173-րդ հոդվածներում լրացումներ կատարելը, բխում է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետից, որի համաձայն արգելվում է աշխատանքից ազատում հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ընթացքում կամ մայրության ընթացքում՝ մինչեւ երեխայի երեք տարեկան դառնալը: Այս դեպքերում պատասխանատվություն է նախատեսվում օրենքով սահմանված կարգով (տես ՀՀ քրեական օրենսգրքի 156-րդ հոդվածը:):

ՀՀ քրեական օրենսգրքի լրացումը վերաբերում է հորդորելու, խաբեության կամ այլ միջոցով կնոջն ապօրինի աբորտ կատարելուն հակելուն: Այս դեպքում նույնպես հանցագործության օբյեկտը կնոջ կյանքի եւ առողջության անվտանգությունն ապահովող հասարակական հարաբերություններն են, որտեղ կինը հանդես է գալիս այս հանցագործության տուժողի դերում, քանի որ նրա հանդեպ իրականացվում է թե հոգեկան եւ թե ֆիզիկական բռնություն:

Առաջարկվող փոփոխությունները ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցնի Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային-իրավական փաստաթղթերին ու ստանձնած պարտավորություններին եւ գենդերային տեսանկյունից ներդաշնակություն կմտցնի ՀՀ օրենսդրության մեջ:

Նախագծի մշակման աշխատանքներին մասնակցել է իրավաբանական գիտությունների թեկնածու Գեղեցիկ Գրիգորյանը: